

Ա.ԱՌԵՐ - Կազմակերպություն

Հիրշու և քառակից

1941թ

891.99  
S-41



891.542-34

Խ-28

ԱՐԴԱՐ ՏԵՐ-Խ-ԱՀԱՑՐԵԱՆ



=ԵՐԿՈՒ

ԵՂԲԱՅՐ=

ՀԵՔԻԱԹ

ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Երեւանի օպտակար զիտելիքներ տարածող ընկերութեան

№-3

Ք Ի Ֆ Լ Ի Ս  
Կ Ե Ր Ա Մ Ա Կ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ Ա Ր  
1911

ՀՅԱ. Յ. Օ. Տ.

Կ

ԱՐԴԱՐ ՏԵՐԱՊՈՑՐԵԱՆ - 6 NOV 2011

391.99  
S-41

# ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐ

ՀԵՔԻԱԹ

ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Երեսանի օգտակար զիտելիքներ տարածող ընկերութեան

№—3.



ԹԻՖԼԻՍ  
Ելեքտրատոպարան Օր. Ն. Աղանեանցի, Պոլից. 7

1911

115

20.08.2013

58327

MOS VON A. 004302114153 08341

4232

# ՊԵՂԱՐԺ ՎՈՒՐ

ԵՐԿՈՒ ԵՂԱՅՅՐ

## ԵՐԿՈՒ ԵՂԱՅՅՐ

Հեղիաք

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՀ

I

Մի խեղճ փայտահատ և իր ջահել կին  
Բնակւում էին անտառի մօտին:

Մարդը իր էշով միշտ փայտ էր կրում,  
Կինը գլուխ-կախ տան բանը հոգում:

Օր կուշտ, օր քաղցած նոքա ապրեցան  
Եւ երկու սիրուն տղայ ունեցան:

Երկուսն էլ առողջ, փարթամ ուժերով,  
Երկուսն էլ զանգուր, «ոսկի» մազերով:

II.

Մի օր փայտ-հատը անտառի խորքում  
Տեսաւ մի թռչուն թառած իր բնում:  
Տարին տասներկու ամիս անտառում  
Նա վառելիքի ծառեր էր կտրում.

Տարին տասներկու ամիս անտառում  
Նա հազար տեսակ թռչուն էր տեսնում,  
Բայց այս թռչունը «մի այլ տեսակ» էր,  
Հասարակ լեզով պատմել դժւար էր:  
Փայտ-հատը թռղեց ձեռքից կացինը.—  
Մաքումը դըեց բռնել թռչունը:

Բարձրացաւ, հասաւ մինչ ծառի կատար,  
Բայց իզուր անցաւ նրա միտքը չար:  
Թռչունը թռաւ, իր բնից գնաց,  
Բնի մէջ մի հատ փայլուն «ձու» մնաց:  
Փայտ-հատը դրեց իր ծոցը այդ «ձուն»,  
Յած իջաւ ծառից, և դարձաւ իր տուն:

## III.

Տուն հասաւ շատ ուշ. — կինը մըմըթաց.  
Տանը հաց չկար, ճրագ-լիսն սպառւած:  
Մայր ու զաւակներ կուչ եկած միժնում,  
Ուշացած հօրը ճանալին ին նայում:  
— կաւ ես պատժում մեղ, խօսեց կինը հեղ:  
— ինչ էլ որ ասես, իրաւունք ունես.  
«Ամբողջ երկու ժամ իմ գործը թողած,  
«Կուղէի բռնել մի թռչուն թառած:  
«Դու խնդրեմ ինձի ցնդած չկարծես,  
«Այդպիսի թռչուն երբէք տեսած չես:  
«Բայց քեզ ինչ ասեմ... Ահա նրա «ձուն»,  
«Որ ես վեր առայ և բերի մեր տուն:  
Եւ հէնց որ հանեց նա «ձուն» իր ծոցից. —  
Մթին խրճիթը փայլեց շափաղից:  
Կինը վեր թռաւ, աշքերը բռնեց,  
Փայտ-հատն էլ իրեն տեղում շւարեց:  
— Այ քեզ ճրագ-լիս, էլ մոմն ինչ կանես,  
«Կարծեմ ուշանալս ինձի կներես...  
Փոքրիկ «ձուն» դրին սեան կոճի տակը,  
Նա լոյս էր տալիս լաւ, քան ճրագը:

## IV

Դուք գիտէք անշուշտ աշխարհի բաներ:

Ամբողջ քաղաքը սկսեց խօսել,  
Թէ այս ինչ թաղում, այս ինչ խրճիթում, նմ  
Հրաշք ու կրակ մի «ձու» է գտնուում:  
Ոչ ոք չի տեսել այդպիսի հրաշք. — Նեղրածն  
Նա փայլ-վլում է, որպէս արեգակ: Ամի՞ նմ  
Լսեց այդ բանը հրէայ իսրայէլ,  
Շփեց իր ցանցառ միրուք ու բեխեր,  
Եւ մտքումն ասաց. — այս, իսրայէլ  
Այդ «ձուն» անպատճառ պէտք է ձեռք զցել. Դ  
Դու իսրայէլն ես, ին ակնավաճառ,  
Թռչնի ձու չէ դա, այլ մի անգին քար,  
Իսկ այդ «ձուն» կրող անտառի թռչուն  
Ունի իր մէջը մի մեծ զօրովթին. —  
Ով բռնի նրան, հանի փորոտիք,  
Կուլ տայ սեւ թոքը եւ նրա քարձիկ,  
Նա մեծ քաղաքի թագաւոր կղառնայ,  
Իսկ բարձն ամեն օր մի քսակ կտայ. Դիսխան  
Քսակը թէկ կինի փոքրիկ,  
Բայց դեղին-դեղին ոսկիներով լիք: Ճրման կը  
Այդ ինձ պատմել է իմ պառաւ տատը,  
Ես չեմ մոռացել նրա հէրիաթը:

## V

Երբ երկրին տիրեց իրիկւան մութը,  
Հրէայ իսրայէլը թողեց խանութը:  
Նա գնաց ուղիղ փայտահատի մօտ,  
Որ տեսնի, թէ նա ինչի է կարօտ:  
Հասաւ խրճիթին, տան դուռը բացեց,  
Դռան մօտ նրան կինը ընդունեց:  
— Բարեկ քեզ, քոյրիկ, դու մի զարմանալ,

«Եկել եմ ձեզ մօտ, կուզեմ քիչ խօսալ:  
 «Ամբողջ բաղաքը հրաշք է պատմում,  
 «Ես էլ հրաշքին խիստ եմ հաւատում.  
 «Խնդրեմ «Ճուն» ցոյց տաք, ինչքան է տեսնեմ:  
 «Իմ կինս էլ ինձ է զօրում, որ ճարեմ»,  
 Մինչ դեռ նա այսպէս իր «ցանցն» էր փռում,  
 Փայտ-հատն երևաց բագի դռներում:  
 —Այ, բարե, բարե, ազնիւ բարեկամ.  
 Աղքատի ձեռքը պինդ սեղմեց հրէան:  
 —Ասում են անտառից մի «Ճու» ես բերել...  
 —Այո, այսօր էլ զտայ մի հատ էլ:  
 Ասաց փայտ-հատը միամիտ կերպով,  
 Եւ ցոյց տւեց «Ճուն» փայլող շողերով:  
 Հրէան որ տեսաւ անգին բար-ակը:  
 Աշքերը թռան գագաթի տակը:  
 Էլ չը համբերեց շահամոլ հոգին.—  
 —«Ծախիր ինձ այս «Ճուն», ասաց փայտարին:  
 —«Ի՞նչ ուզես կտամ. առ տասը ոսկի»:  
 Մեր խեղճ փայտարը չկանգնեց խօսքի:  
 —«Վեր առ քեզ լինի, և տուր ինչ արժի,  
 «Ինչ որ բո կամքը արժան համարի:  
 —«Լաւ է, լաւ, առ տամ քեզ հարիւր ոսկի,  
 «Բաւ է, էլ մի կաց հակառակ խօսքի:  
 Ասաց հրէան, քսակը հանեց.  
 Խեղճ փայտահատը զարմանքից ապշեց:  
 Կինը յետեկից քաշեց նրա փեղը.  
 Նա միտքը բերեց իր կեանքն ու էշը:  
 Մի էշի յուսով նա կեանք էր վարում,  
 Տուն—տեղ, ընտանիք, երեխայ պահում:  
 Մինչդեռ նա իր մէջ այդ բանն էր խորհում,

Գող իսրայէլը ոսկիքն էր համրում:  
 Համրեց երկու քսակ ոսկի յիսնական,  
 «Ճուն» առաւ թռաւ, որպէս ուրուական:  
 VI  
 Եւ հարստացաւ աղքատ փայտահատ.  
 Այն «Ճուից» ծախեց էլի երկու հատ:  
 Եւ որովհետև հրէան շատ զօրեց,  
 Նա մի մութ գիշեր թռչունին բռնեց  
 Բերեց իր տունը, գրեց վանդակում.—  
 Վանդակը կորած ոսկի յուլունքում:  
 Ինչքան էլ զօրեց, թախանձեց հրէան,  
 Տաշաճառեց թռչունը նրան:  
 Տիշինեց իր համար ոչ թէ տուն—պալատ,  
 Բաց արեց խանութ՝ ապրանքով առատ,  
 Բա Եւ այնուհետև մեր նոր «քազրկեան»  
 Բա «Խրիդի» գնաց Թաւրիզ ու Թէյրան:  
 Թողեց խանութը աշկերտի յոյսով,  
 Թողեց կնոջը՝ երեխաներով  
 Հրէայ ընկերոջ հոգատարութեան.  
 Անկասկած նրա սրտի բարութեան:  
 VII  
 Հրէան փայտարին որ ճանփու դրեց,  
 Իր նպատակին հասած համարեց:  
 Շուտ-շուտ գալիս էր փայտարի կնոջ մօտ,  
 Որ տեսնի, թէ նա ինչի է կարօտ:  
 Հոգում ամեն հոգս, անում ամեն բան,  
 Որպէս սրտացաւ տան ու բարեկամ:  
 Իր մտերմութիւնն այնտեղ հասցըեց,  
 Որ ողջ ընտանիքն իր ձեռքն հաւաքեց:

Կինն էլ անպաշտպան մի թոյլ արարած.  
Նա մեղաւոր չէր, կասէք, անկասկած:  
Հրէան երբ կնոջ սիրտը գրաւեց,  
Էլ գնալ-գալը դադարեցրեց:  
Սուտ հիւանդ եղաւ, անկողին մտաւ,  
Եւ մի քանի օր տանից դուրս չեկաւ:  
Փայտարի կինը, Մարիամ խան-բաջին,  
Տեսութեան վազեց իր բարեկամին,  
Որ տեսնի նրա որտեղն է ցաւում,  
Ով է հոգս անում, ով է խնամում:

## VIII.

Խորամանկ հրէան մի խորը անքաց.  
Այնպէս ձևացրեց, թէ ուշքից գնաց:  
Բացեց աչքերը, նայեց Մարիամին,  
Չեռքով նշան արեց՝ նստել իր կողքին:  
Մարիամը նստեց, հրէան սկսեց,  
—Քոյրիկ, մեռնում եմ, մի ճար արա ինձ,  
«Բոլոր լողմանիք ձեռք քաշած ինձնից,  
«Մի ճար կայ միայն, այն էլ քո ձեռքին,  
«Թէ ինձ սիրում ես, լսիր իմ խօսքին.  
«Միրտս ուզում է այն թռչնի մսից,  
«Որ մարդդ բռնեց բերեց անտառից:  
«Եթէ ինձ համար մորթես դու նրան,  
«Դա միայն կլինի ինձ դեղ ու դարման»:  
—«Դու մեզ արել ես շատ ու շատ բարիք,  
«Ես չեմ մոռանալ քո մեծ երախտիք,  
«Մի թռչունն ինչ է, որ ես խնայեմ,  
«Իսկոյն կմորթեմ, կեփեմ, կուղարկեմ»:  
Եւ Մարիամ-բաջին տուն վազեց իսկոյն,

Մորթեց ու կետրեց այն «անգին» թռչուն,—  
Վառեց օջաղը և «եղճալիկով»  
Դրեց, որ եփի շորւայ բրնձով,  
Ու էլի վազեց դէպի հրէան,  
Որ միամտացնի և սիրտ տայ նրան: ոյ մշտի Ս  
IX

Մարիամը հէնց որ դուրս եկաւ տնից, ոք  
Նրա որդիքը տուն դարձան դաշտից:  
Վեր առան տաշտից մի մի լաւաշ հաց  
Եւ սկսեցին ճաշ անել կամաց:  
Երկու եղբայրներ՝ անխնամ թողած,  
Տաք կերակուրի կարօտ մնացած,  
Տեսան օջաղում կաթսայ է եռում,  
Իսկոյն հասկացան, որ բան կայ միջում:  
Բաց արին խուփը, տեսան թռչունը,  
Բայց իմանալով մօր բնութիւնը,  
Վախից թռչունին ձեռք չը տւեցին.  
Միայն «սկ թռչն» ու «բարձիկն» հանեցին:  
Սկ թռչը թիրա արեց մեծ եղբայր,  
Փոքրը վեր առաւ քարձիկն իր համար:  
Էլի կաթսայի խուփը ծածկեցին  
Եւ ուրախ-ուրախ փողոց վազեցին:

## X

Մարիամին շուտ յետ ուղարկեց հրէան,  
Որ գնայ, բերի թռչունի շորւան:  
Բայց որքան եղաւ զարմացքը նորա,  
Երբ տեսաւ չկայ ուզածը իրա:  
—Բա ուր են սրա սեւ թռն ու բարձիկ,  
Հարցրեց հրէան բարկացած սաստիկ,

—Միթէ մէջը չեն, ես ձեռք չեմ տւել,  
 «Ինչպէս կերեի որդիքս են կերել»:  
 —«Որդիքդ են կերել, դէ վազիր շուտով,  
 «Բռնիր դու նրանց, հարիր ջէջիմով,  
 «Մինչև որ նրանք սիրտը յետ բերեն,  
 «Եւ քարճիկն ու սև թոքը ետ դարձնեն:  
 «Նրանք անմաշ են և անմարսական,  
 «Քո զաւակներին մահի վնաս կտան»:  
 Այսպէս ահ տւեց հրէան Մարիամին,  
 Մարիամը ապշած տուն վազեց կրկին,  
 Կանչեց քարկացած իր զաւակներին,  
 Մի մեծ փայտ առաւ, ծեծի երկուսին:  
 Խեղճ երեխայքը փայտը որ տեսան,  
 Վախից «ծլունկ» եղան ու փախսը առան:  
 Մարիամը թողեց իր շալը շէմքին,  
 Վազեց, որ բոնի չար զաւակներին:  
 Նա վազեց առաջ, տղայըն՝ առաւել:  
 Մայրն իր մտքովը այնպէս էր տարւել,  
 Որ չը նկատեց, թէ վաղուց արդէն  
 Նրանք դուրս էին եկել քաղաքէն:  
 Վազելով անցել էին դաշտ-բլուր:  
 Մարիամը տեսաւ, որ վազելն է զուր,  
 Եւ տղաները կարող են կորչել,  
 Ամայի դաշտում գնալ, մոլորւել...  
 Նա դէն շպրտեց փայտը իր ձեռքից,  
 Եւ յոգնած-յոգնած յետ դարձաւ դաշտից:  
 Բայց տղաները շատ էին առաջ,  
 Նրանք վազեցին, փախան էլ առաջ,  
 Մինչև մութն ընկաւ, ճանփէքը շաղւեց,  
 Եւ չորս բոլորը մութ խաւար տիրեց:

Խեղճ երեխաներ, ինչ պէտք էր անել. չն  
 Քաղցած ու յոգնած շարունակ վազել...  
 Դաշտում մոլորւած, շուրջը խուփ-խաւար,  
 Ոչ մի կողմից լոյս, կամ ձայն, կամ հաւար...  
 Ես սարսափում եմ նրանց փոխարէն:  
 Մեծը հասկացաւ, որ իրանց ճանփէն  
 Վաղուց են կորցրել, էլ յետ չեն դառնալ,  
 Պէտք էր մի կողմով միշտ առաջ գնալ:  
 Սակայն փոքրիկը նրան չէր լսում.  
 Լաց ու շիւանով «մայրիկ» էր կանչում:  
 Մեծն ասաց նրան. — Եղբայր դու նստիր  
 Այս քարի «տալդէն» և ինձ սպասիր.  
 Ես գնամ առաջ, որ մի տուն գտնեմ  
 Եւ քեզի համար հաց ճարեմ բերեմ:

## XII

Քնեց փոքրիկը կերակրի յոյսով,  
 Իսկ մեծը առաջ գնաց վախելով:  
 Շատ գնաց, թէ բիշ, Աստուած է գիտում:  
 (Հին հէքիաթները այսպէս են պատմում,  
 Երբ կամենում են ասել որ մէկը  
 Կորցրել է գլուխն ու կեանքի դէկը):  
 «Եօթն օր, եօթ գիշեր» նա ճանփայ գնաց:  
 Մի օր՝ վազօրդեան արկը ցոլած՝  
 Նա հասաւ մի մեծ և հզօր քաղաք. —  
 Զորս կողմը բուրգեր, պարիսպ, աշտարակ,  
 Մտաւ քաղաքի երկաթ-դռներից  
 Եւ շւարեցաւ տեսած պատկերից:  
 Ողջ քաղաքացիք, թէ ծեր, թէ մանուկ,

Բարձրացրել էին ահապին աղմուկ,  
Ոչ ոք ոչ ոքի չեր ուզում լսել. —  
Կարծես մէկ մէկու ուզում են ջարդել:  
Անտէր, անգլուխ ամբոխը վայրագ,  
Թողած առօրեայ հոգս ու աշխատանք,  
Մի ընդհանրական ժողով էր կազմել —  
Ուզում էին նոր թագաւոր ընտրել:

## XIII

Հին ժամանակը ամեն մի քաղաք  
Ունէր իր համար թագաւոր ու թագ:  
Եւ հէքիաթները այսպէս են պատմում,  
Որ «թառլան» արծիւն էր թագաւոր ընտրում:  
Երբ որ մեռնում էր թագաւորը հին,  
Իսկոյն թոցնում էին «թառլանին»  
Բոլոր ամբոխը մեծ հրապարակում  
Արծիւ թոփչքին էին հետևում:  
Ում ուսին իջնէր հպարտ թոչունը,  
Նրան կտային իշխանութիւնը:

Մեր մեծ եղբայրը, օտար պատանին,  
Անծանօթ կեանքի այդ տեսարանին,  
Իր գլուխը կախ քաշւեց մի հով տեղ,  
Եւ մտածում էր, թէ արդեօք նրտեղ  
Նա կարողանայ մի քիչ հաց ճարել,  
Ճանփում մնացած եղբօրը տանել:  
Մինչ դեռ նա այս էր խորհում մտքումը,  
Տեսաւ դէպ իրան թռաւ թոչունը:  
Շարժեց, հաւաքեց թեերը հպարտ,  
Եւ թառեց նրա ուսերին աղատ... .

## XIV

Ամբոխն հետևեց արծիւ թոփչքին,

Տեսաւ անծանօթ, օտար պատանին:  
Գոռաց ամբոխը, սուլեց, բողոքեց,  
Նորից նոր արծւին թոցնել ուզեց:  
Ով էր պատանին, ոչ ոք չգիտէր,  
Գուցէ մի կորած բաղտախնդիր էր:  
Եւ որպէսզի նա չերևայ դրսում,  
Տարան փակեցին մի փուլ մարաքում:  
Անցաւ ամբոխը, յուզւեց, երերաց,  
Պալատից աղատ արծիւը սուրաց,  
Անցաւ օդի մէջ, շրջաններ արեց,  
Երկար ժամանակ օդում սաւառնեց,  
Եւ վերջը՝ ի մեծ զարմանս բոլորին,  
Ցած իջաւ, թառեց մարաքի կտրին:  
Վազեց ամբոխը, զոռաց, հառաչեց,  
Բայց նորից փորձել էլ չպահանջեց:  
Հանեցին շւարած օտար պատանուն  
Եւ կեցցէներով տարան տնկտուն:  
Տարան բազմեցըին գահն արբայական,  
Եւ երդում կերան հպատակութեան:

Բարձրացաւ տեղից խելօր պատանին,  
Շտկեց ոսկէհուռ մազերը ճակտին,  
Մի լուրջ հայեացքով դիտեց ամբոխին. —  
Ամբոխը տեսաւ իր թագաւորին.

«Կեցցէ մեր արքան,  
«Կեցցէ յաւիտեան»:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԸ  
 Ա  
 Մեծ եղբայրն հասաւ իրա մուրագին,  
 Այժմ ձեզ պատմեմ փոքրիկի մասին:  
 Ծագեց արևը անտառի խորքից,  
 Զարթնեց փոքրիկը անհանգիստ քնից:  
 Բացեց աչքերը, նայեց դէս ու դէն,  
 Որպէս անտառում վախեցած էրէն:  
 Ներքին սարսափով զգաց ամեն բան.—  
 Շուրջը անծանօթ, ամայի բացան:  
 Յիշեց՝ եղբայրը գնաց հաց բերի  
 Բայց թէ որ կողմով, այդ Աստուած գիտի:  
 Ներքին յուզմունքից փղանքը բռնեց,  
 Բայց նա առաջին արցունքը պահեց.  
 Սրբեց աչքերը շուխի թևերով  
 Բռնեց մի ճանփայ, գնաց մի կողմով:  
 Իր ցաւը նրան այնպէս էր տարել,  
 Որ քիչ էր մնում, թէ չնկատէր  
 Քարի բարձի վրայ մի քսակ փոքրիկ,  
 Եւ մէջը դեղին ուսկիներով լիք:  
 Այդ բանը նրան մի քիչ սիրտ տւաւ,  
 Վեր առաւ քսակն ու առաջ անցաւ:  
 Շատ գնաց թէ քիչ, Աստուած է գիտում.  
 Քանի արև էր նա չէր վախենում:  
 Բայց ահա արևն իջաւ իր մուտը,  
 Սկսեց տիրել իրիկւան մութը:  
 Տղան ուժ տւեց յոգնած ոտներին,  
 Անցաւ քիչ առաջ, նայեց արևին,  
 Եւ երբ բարձրացաւ բլուրը վերջին,  
 Մի ընդարձակ ծով բացւեց առաջին:

Ա  
 Պատանին մնաց տեղում շւարած:  
 Իր կեանքում երբէք նա ծով չէր տեսած:  
 Անսահման դաշտը՝ կապոյտ ջրերով,  
 Չորս կողմը կանաչ տափաստաններով:  
 Փրփուր ալիքներ գնում են գալիս,  
 Խոնաւ ափերին համբոյը են տալիս:  
 Ծովի յատակից խխունջ ու բարեր  
 Հանում, զարդարում թաց-թաւիշ ափեր:  
 Կանգ առաւ տղան, նայեց ծովակին,  
 Նայեց մայր մտնող ծոյլ արեգակին,  
 Որ խորասուզւած ծովի ջրերում,  
 Կրակ շողերով վառւում էր, պլպլում:  
 Վառեց, հուրհրաց արևը ծովում  
 Եւ կամաց-կամաց մայր մտաւ հեռւում:  
 Թողեց ծովակը՝ կապոյտ ջրերով,  
 Թողեց պատանուն՝ տխուր մտքերով:  
 Տղան սթափւեց իր գրութիւնից,  
 Մի ցուրտ հով անցաւ նրա ճակատից:  
 Եւ տեսաւ ինչպէս վէտ-վէտ հովերից  
 Ուռչում է ծովը խիտ յորձանքներից...  
 Յորձանքների մէջ ահա մի նաւակ,  
 Նաւակի մէջը շքեղ պատգարակ:  
 Ողջ կամարները կրակ-աստղերից,  
 Վարագոյրները լուսնի շողերից:  
 Անդեկ և առանց առագաստների  
 Լողում է նաւը ծով-կախարդների:  
 Իսկ նաւի առջև վեց զոյգ կարապներ,  
 Անբիծ սպիտակ ձիւնի քուլաներ,  
 Միգաճեմ նազով յառաջ են լողում,

Կասես նաւակը նրանք են տանում:  
 Պատգարակի մէջ ծովի թագուհին,  
 Որ կռթնած թաւիշ-արծաթ բարձերին,  
 Իր երեկոյեան ճեմանքն էր անում,  
 Յստակ ծովակի հայելուն նայում:  
 Նայում էր նայում, և չէր կշտանում.  
 Այնքան հմայիչ, և այնքան սիրուն  
 Նա իրան լինել երբէք չէր կարծում:  
 Տղան նայում էր և չէր հաւատում,  
 Թէ իր տեսածը փաստ էր իրական,  
 Եւ ոչ խարուսիկ, կամ ցնորական...  
 Եւ նա պատրաստ էր եօթն օր, եօթ գիշեր  
 Չուտէր, չխմէր, հէնց նրան նայէր:  
 Անդեկ և առանց առագաստների  
 Լողաց նաւակը ծով-կախարդների,  
 Իսկ նրա առջև վեց զոյգ կարապներ,  
 Անբիծ սպիտակ, ծիւնի քուլաներ,  
 Սիգաճեմ նազով յառաջ սուրացին,  
 Տարան նաւակը աչքից հանեցին:

## III

Տղան սթափւեց իր դրութիւնից.  
 Մի ցուրտ հով անցաւ նրա ճակատից:  
 Նա թողեց մի կողմ ծովը կապուտակ,  
 Շուռ եկաւ, տեսաւ՝ հեռում մի տնակ:  
 Էլ փրկւած էր... Շարժեց ոտները,  
 Հասաւ տնակին, տեսաւ դռները  
 Բաց են, բայց ներսը ոչ մի մարդ չկար.  
 Թէև տան ամեն սարք ու կարգը կար:  
 Նստեց մի հատիկ աթոռի վրայ,

Նստեց, սպասեց, որ տան տէրը գայ:  
 Շատ չանցաւ, ծովում մի նաւակ տեսաւ,  
 Նաւից դուրս եկաւ մի թեթև պառաւ:  
 Թողեց նաւակը ծովակի ափին,  
 Եկաւ դէպի տուն, մի կապոց ձեռքին:  
 Ներս մտաւ, տեսաւ՝ օտար պատանին:  
 Ոսկի մազերը փուած ուսերին:  
 — «Բարե քեզ, որդի, որտեղից եկար,  
 «Այս երկրի ճանփէն որտեղից գտար,  
 «Օձն իր պորտովը, զուշն իր զանապով  
 «Չեն համարձակւել անցնել մեր մօտով,  
 «Աշխարհի սկզբից մինչև օրս այս օր,  
 «Ոչ մարդ-արարած, ոչ զուշ թեաւոր  
 «Չեն վստահացել մեր կողմը անցնել,  
 «Այս կախարդական աշխարհը մտնել:  
 «Ով ընկաւ մի հետ, էլ պըծում չունի  
 «Ծովի թագուհու գերին կլինի...»  
 — «Տատի, սոված եմ—խօսեց մեր տղան—  
 «Դեռ հէքիաթներդ թող կախարդական:  
 «Ասա, թնչ ունես տանգ ուտելու,  
 «Աստծու հիւրին հիւրասիրելու:  
 (Հին հէքիաթները այսպէս են պատմում,  
 Ինչ օտար եկաւ, հիւրն է Աստծուն,  
 Նախ պէտք է հիւրին հաց տալ, ինամել.  
 Նոր նրա գլխին եկածը լսել):

## IV

Լսեց պառաւը իր հիւրի խրատ,  
 Բացեց կապոցը պաշարով առատ:  
 Այդքան ճոխ ընթրիք տղան չէր տեսել,

Դա մի սեղան էր արքայավայել: արս զնոս:  
Կուշտ կերաւ տղան, սրբեց բերանը ուած  
Դարձաւ պառաւին խօսեց այս բանը: ուած  
— «Դու մի հարցնիլ ինձ, թէ ով եմ, տատի,  
«Դու ինձ մայր եղիր, իսկ ես քեզ որդի,  
«Մի առժամանակ դու ինձ խնամի, ուած  
«Մինչև որ տեսնենք, Աստուած ինչ կամի»:

Լսեց պառաւը, մնաց շւարած: —  
Հասակով մատաղ, խելքով զարգացած  
Այդպէս պատանի երբէք չէր տեսել,  
Մտածեց, կախարդ կարող է լինել: մնջ  
Վերկացաւ անխօս, ծալքը բաց արեց, առջև  
Իր հիւրի համար անկողին փռեց: ուղան չի  
Քնեց պատանին հանգիստ ու խաղաղ, ի մաջ  
Եւ առաւօտը վերկացաւ շատ վազ: այս ութ  
Պառաւը նրա կողքին հաւաքեց  
Եւ քարծի տակից մի քսակ հանեց: որսի լինու  
Մի քսակ սիրուն, ոսկէկար, փոքրիկ, յանձ  
Եւ մէջը դեղին ոսկիներով լիք: յանձն ութ  
Պառաւը յանձնեց քսակը տղին, ո չէ՞ առձ  
Տղան քսակը զրեց իր ծոցին:

Պառաւը յետոյ նստեց իր նաշակ: մ ով  
Թողեց տղային տանը միայնակ: օ զամո չէ՞  
Պատանին տեսաւ, թէ նստը ինչպէս  
Սուրալով անցաւ դէպի ծովի ներս: այս ուն  
Անդեկ և առանց առագաստների  
Լողաց նստակը ծով—կախարդների...

Իրիկան դիմաց պառաւը դարձաւ,  
Մի կապոց ընթրիք իր հետը բերաւ,  
Երբ առաւօտը կողինքն հաւաքեց,

Նա բարձի տակից մի քսակ հանեց:  
Մի քսակ սիրուն, ոսկէկար, փոքրիկ,  
Եւ մէջը դեղին ոսկիներով լիք:  
— «Ախ, ասաց տղան, ինչ մոռացկոտն եմ:  
«Ամեն առաւօտ թիսաս թողնում եմ:  
Սակայն պառաւը այս մի անգամին  
իսկոյն հասկացաւ զօրութիւն բանին:  
Նա «մատը կծեց» նայեց տղային,  
«Երանի, ասաց, քո մայր-ծնողին...»

V

Մի օր թախանձեց տղան իր տատին,  
Իրան էլ հետը առնել նաւակին:  
Նրա սիրտն էլ էր ուզում ծով մտնել,  
Պաղպաջ ալիքներ ու յորձանք տեսնել:  
Պառաւը լսեց պատանու միտքը  
Բայց չկատարեց նրա խնդիրը:  
— «Ծովում ապրում է ծովի թագուհին,  
«Մեծ թագաւորի աղջիկ գեղուհին:  
«Աղջիկ—կուսական ուժերից բռնւած՝  
«Ապրում է մենակ, աշխարհից կտրւած:  
«Ոչ մի մարդ չկայ նրա ամրոցում.  
«Պառաւն է մենակ նրան ծառայում,  
«Ոչ մի պատանի՝ ցանկութեան մտքով  
«Զի կարող անցնել ամրոցի մօտով,  
Մինչև ցանկալի օրը կհասնի», ո ձագն արած  
Կզայ փեսացուն նրան կտանի»...

Լսեց պատանին պառաւի պատմած,  
Եւ հիացմունքից մնաց շիւարած:  
Նա յիշեց իսկոյն ծովի տեսիլքը,

Եւ շարունակեց իրա խնդիրքը:  
Ել պոկ չի եկաւ նա իր պառաւից,  
Մինչև որ նրան հանեց իր կամքից:  
Տատը վեր առաւ նաւի մէջ նրան  
Եւ տարաւ-հանեց ամրոց տիրական:

## VI

Ազատ ամրոցի ազատ տիրուհին  
Լարեց այդ գիշեր մի թակարդ խորին,  
Միամիտ տղան գլորւեց մէջը,  
Խիստ ապաշաւեց թէն նա վերջը:  
Ազատ ամրոցի ազատ տիրուհին  
Փառաւոր ընթրիք տւեց իր հիւրին:  
Առատ համադամ կերակուրներով,  
Յայն-կոյս ծովային թունդ գինիներով  
Հարբեցրեց նրան, ուշքիցը հանեց,  
Գցել տւեց ճօճը և այնքան հարեց,  
Որ նա փոձկաց «սիրտը շուռ տւեց»  
Անմաշ քարծիկը կրկին յետ դարձրեց:  
Ազատ ամրոցի ազատ տիրուհին,  
Անզգայ հարբած հիւրի վիճակին,  
Անմաշ քարճիկը իսկոյն գրաւեց,  
Տարաւ պատանուն մի նաւակ գցեց:  
Անդեկ և առանց առագաստների  
Լողաց նաւակը ծով-կախարդների,  
Տարաւ մինչև լոյս ծովում պտտեց,  
Մի անծանօթ կողմ ափը դուրս ձգեց...  
Ծագեց արևը ծովի խորբերից,  
Մթափւեց տղան իր երազներից:  
Բացեց աչքերը, նայեց դէս ու դէն,

Ինչպէս անտառում վախեցած էրէն:  
Ներքին սարսափով զգաց ամեն բան,  
Վայ տւեց գլխին, արեց սուգ-շիւան,  
Եւ այնքան ընկճւեց ներքին յուզմունքից,  
Որ փուեց ափին, պինդ քնեց նորից:

## VII

Նրան զարթեցրեց մի սաստիկ աղմուկ.—  
Վեր թռաւ, տեսաւ երեք նոր վհուկ  
Իրար մէջ մի թունդ կոփւ են սարքել.—  
Ոչ ոք ոչ ոքի չի ուզում լսել:  
Բոնել են իրար օձիք ու թևեր,  
Մէկ մէկուց խլում զանազան իրեր:  
Այս վհուկները որ տեսան տղին,  
Մարդկային լեզով այսպէս խօսեցին.—  
«Բարե քեզ, եղբայր, նրանեղից եկար,  
«Այս երկրի ճամփին հրտեղից գտար,  
«Օձն իր պօրտովը, զուշն իր զանազով  
«Զեն համարձակւել անցնել մեր մօտով,  
«Աշխարհի սկզբից՝ մինչև օրս այս օր,  
«Ոչ մարդ-արարած, ոչ զուշ թևաւոր  
«Զեն վստահացել մեր կողմը անցնել,  
«Այս կախարդական աշխարհը մտնել.  
«Ով ընկաւ մի հետ, էլ պրծում չունի,  
«Ծովի թագուհուն գերի կլինի...  
«Արի մեզ լսիր, դու, աղամորդի  
«Մեր այս կոփւը քննիր ու դատի  
«Մեզ հաշտեցրու, վերջ տուր այս վէճին,  
«Մենք քեզ պէտք կգանք, մենք ու մեր հոգին:»  
—Ի՞նչ է ձեր վէճը, հարցրեց տղան.—

Վհուկներից մէկը բացատրեց նրան.—  
— «Մեռաւ մեր մայրը, (լոյս նրա հոգուն)  
«Մեռաւ և թողեց մեզ ժառանգութիւն  
«Այս փոքրիկ խալին, անգործ ու անթել,  
«Այս փոքրիկ գլխարկ, անմաշ-սոկէ թել,  
Եւ անփուտ փայտի այս մի գաւազան,  
«Հմայրի ծնող ու կախարդական»:  
— «Բայց այդ իրերը ի՞նչ շնորհը ունին,  
«Ո՞րն է դրանցից աւել թանկագին,  
«Մինչև ինձ չասէք դրանց զօրութիւն,  
«Չեմ կարող բաժնել ձեր ժառանգութիւն:  
— Այս գլխարկն ով որ իր գլխին դնի,  
«Նա մարդու աչքի անտես կլինի,  
«Ուր էլ որ գնայ, ինչ էլ որ անի,  
«Ներկայութիւնը, ոչ ոք չի տեսնի:  
«Այս գաւազանը է կախարդական,  
«Քեզ համար կանի խսկոյն ամեն բան.—  
«Ճոխ սեղան բանալ, հեռու տեղ թռչել,  
«Շնչաւորներին անշնչի փոխել,  
«Մարդուն դարձնել սողուն կամ թռչուն,  
«Կամ գրաստ դարձնել, հեծնել օրն ի բուն,  
«Մի խօսքով ինչ որ քո սիրտը կամի,  
«Ինչ որ հաճոյքդ արժան համարի,  
«Ական թօթափել պատրաստ կունենաս:  
«Երբ խալուն նստես և հրաման տաս,  
«Նա քեզ կտանի, ուր սիրտդ կամի,  
«Աշխարհից աշխարհ քեզ դուրս կհանի,  
«Եւ դու չես զգալ ոչ մի նեղութիւն:  
«—Ահա սրանը են մեր ժառանգութիւն:»

VIII  
Լսեց պատանին. ծոծրակը ըորեց.  
Նա իր մտքումը մի բան մտածեց:  
Բաղտը բերել էր նոր բարիք նրան,  
Կարող էր պատժել ծովի աղջկան,  
Որ նրան այնպէս անպատիւ արեց,  
«Ոսկու աղբիւրը» ձեռքիցը խլեց:  
— «Լսէք, բարեկամ, ես ձեզ ինչ կասեմ,  
«Զեր ժառանգութիւն հիմա կբաժնեմ.  
«Միայն ինձ ասէք.—Ո՞վ է մեծ ձեզնից,  
«Ո՞վ է խելացի, ուժեղ ամենից:  
Յիմար վհուկներ մէկ-մէկու դիպան,  
Ամենքն ուզեցին մեծ ցոյց տալ իրան:  
— «Այդպէս չի լինիլ, լսէք ինձ նորից,  
«Ծովի ափերի աղի լեռներից  
«Գնացէք, լիզէք որքան ուժ ունէք,  
«Եւ յետոյ ծովի ջրերից խմէք,  
«Ով որ ձեզանից շատ աղ կլիզի,  
Ով որ ձեզանից շատ ջուր կխմի,  
«Նա է բոլորից և մեծ, և հզօր,  
«Նրան ես կտամ այս իրեր բոլոր:»  
Յիմար վհուկներն խսկոյն վագեցին,  
«Եօթն օր, եօթ գիշեր» աղեր լիզեցին,  
Եւ երբ պապաքւեց սրտները աղից,  
Նրանք խմեցին անշափ ջուր ծովից:  
Ուռեց փորերը ցաւով ցաւագին,  
Մեռան, փշեցին շունչն ու հոգին:  
Նրանց իրերը տղան գրաւեց  
Եւ մի նոր փորձի ծրագիր կազմեց:  
Գլխարկը դրեց, նստեց խալու վրան,

Զեռքումը շարժեց կախարդ գաւազան,  
Փակեց աչքերը և բացեց իսկոյն՝  
Տեսաւ ինքն իրան աղատ ամրոցում:  
Տեսաւ—աղջիկը նստել է ճաշի,  
Առանց նաժշտի կամ «ղարավաշի»,  
Պատանին բազմեց աղջկայ դիմաց.  
Նոր զգաց, որ ինքն էլ է խիստ քաղցած:  
Սկսեց ուտել ողջ ամաններից.—  
Դատարկւեց սեղանը կերակուրներից,  
Զարմացաւ պառաւը դրան մօտ կանդնած,  
Ծովի աղջիկն էլ խիստ էր զարմացած,  
—«Իու չես նկատում, որ իմ սեղանից  
«Ուտում է մէկը, անտես մեղանից:  
Ասաց պառաւին հուրի-աղջիկը,  
Եւ ուզեց ցոյց տալ նրան գաղտնիքը:  
Երկու ձեռքերը օդի մէջ շարժեց.—  
Պատանու զլխից «գլխարկը» զցեց:  
Եւ նրանը տեսան «կախարդ» պատանին  
Ճաշում է՝ բազմած սեղանի զլխին...»

## IX

Աղատ ամրոցի աղատ տիրուհին  
Լարեց այդ զիշեր մի թակարդ խորին.  
Միամիտ տղան զլորւեց մէջը  
Խիստ ապաշաւեց թէն նտ վերջը:  
Աղատ ամրոցի աղատ տիրուհին  
Փառաւոր ընթրիք տւեց իր հիւրին.  
Աղատ համադամ կերակուրներով,  
Յայն-կոյս ծովային թունդ գինիներով  
Հարբեցրեց նրան ուշիցը հանեց,

Տարաւ ծովի ափ մի նաւակ զցեց:  
Անդեկ և առանց առագաստների  
Լողաց նտւակը ծով-կախարդների.  
Տարաւ մինչև լոյս ծովում պտտեցրափ ամ թ  
Մի անծանօթ կողմ ափը դուրս հանեց...  
Ծագեց արելը ծովի խորքերից  
Սթափւեց տղան իր «երազներից».  
Բացեց աչքերը, նայեց դէս ու դէն,  
Ինչպէս անտառում վախեցած էր էն.  
Ներքին սարսափով զգաց ամեն բան.—  
Զկային խալին, զլխարկ, զաւազան.  
Ցիշեց ընթրիքը, յիշեց աղջկան,  
Վայ տւեց գլխին, արեց սուգ-շիւան.  
Եւ այնքան ընկճւեց ներքին յուզմունքից,  
Որ փռւեց ափին, պինդ քնեց նորից:

## X

Շատ քնեց, թէ քիչ, աստուած է զիտում:  
Մէկ էլ ինչ տեսնի, ոչ քուն, ոչ արթուն  
Տեսնում է շքեղ պարտէզ աննման,  
Ծառերի միջին մարմար աւազան:  
Մարգարիտ ջուրը ցուրտ շատրւանից  
Յայտում, իջնում էր մարմար ափերից...  
Մէկ էլ երկնքից երկու աղաւնի  
Վայր իջան ափին պաղ աւազանի,  
Հանեցին իրանց փետուր ու թևեր,  
Դարձան աննման, չքնաղ աղջիկներ,  
Եւ մտան ջուրը, որ քիչ լողանան,  
Օրւայ այդ խեղդող շոգից զովանան:  
Նայում էր տղան և չէր կշտանում.—

Այդքան նազելի և այդքան սիրուն  
Աղջիկ-արարած նա չունէր տեսած.—  
Հիացմունքիցը «Ճուր մաղւեց» մնաց...  
Եւ նա փսփագեց «Կօթն օր եօթ գիշեր»  
Չուտէր չխմէր, հէնց նրանց նայէր...  
Նրա գարմացքը եղաւ կատարեալ,  
Եթբ աղջիկները սկսեցին խօսալ:

## XI

—«Քոյրիկ, եկ, խղճա դու այս պատանուն.  
«Որ գերի գարձած խարդախ թագուհուն,  
«Այս երկու անգամ ընկաւ վորձանքի,  
«Հազիւ կարեցաւ գլուխն ազատի.  
«Այժմ անխնամ ընկած այս ափին,  
«Անտէր ու անօգ, չար բաղդի կամքին...  
—«Ես շատ պահեցի այդ խելպակասին.  
«Անսպառ «ոսկու աղբիւրի» մասին  
«Դեռ բան չեմ ասում. թող կախարդական  
«Խալին, գլխարկը, հմայք-գաւազան  
«Չեռքից չհանէր.-բայց չհասկացաւ,  
«Իր բաղդին ինքը աքացի տւաւ,  
«Գնաց գրաււեց խարդախ աղջկան,  
«Եղած-չեղածը զոհ բերեց նրան.

—«Քոյրիկ, այս անգամ լսիր իմ խօսքին,  
«Մի վերջին անգամ եկ, օգնենք խեղճին,  
«Տանը նրան միջոց ամրոցը մտնել,  
«Կորցրածները կրկին ձեռք բերել:  
«Ես խօսք եմ տալիս, նա կը զգաստանայ,  
«Իր մեծ եղրօր մօտ կը վերադառնայ,  
«Գժութիւններից նա ձեռք կքաշի,

«Զի մնալ այստեղ, կեանքը չի մաշիլ»  
—«Թող այդպէս լինի, քոյրիկ իմ անգին,  
«Թող տղան լսի իմ խօսքը վերջին.—  
«Հէնց որ կսթափւի իր տեսիլներից,  
«Մի ծառ կմնայ այս մեծ պարտիզից:  
«Մի ծառ խնձորի, վրան երկու հատ,  
«Մինը վարդ-կարմիր, միւսը գունատ:  
«Թող քաղի երկու խնձորն էլ ծառից,  
«Թող գնա, նստի նաւակը նորից:  
«Անդեկ և առանց առագաստների  
«Կլողայ նաւը ծով-կախարդների,  
«Կտանի նրան ամրոց կհանի,  
«Ծովի թագուհին նրան կփարի,  
«Կխլի խնձորը և անուշ կանի.  
«Եւ այդ խնձորը կերած չկերած,  
«Նրա քունքերից կծլեն յանկարծ  
«Պախրի եղջիւրներ այնքան խիտ ու հոծ,  
«Որ նա չի կարող էլ մտնել ամրոց:  
«Այդ պատուհասից խնձորը գունատ  
«Միայն կփրկի:—Սակայն ես խրատ  
«Չեմ ուզում կարդալ.—խելօք պատանին  
«Եթէ ուշը դարձնի այս հանգամանքին,  
«Կարող է գործը շատ յաջող տանել  
«Եւ իր կորցրածը կրկին ձեռք բերել...»

## XII

Սթափւեց տղան իր տեսիլքներից,—  
Մի ծառ էր մնացել շքեղ պարտիզից.  
Մի ծառ խնձորի, վրան երկու հատ,  
Մինը վարդ-կարմիր, միւսը գունատ:

իսկոյն երկուսն էլ նա պոկեց ծառից,  
Եւ գնաց նստեց նաւակը նորից:  
Անդեկ և առանց առագաստների  
Հողաց նաւակը ծով-կախարդների,  
Տարաւ պատանուն ամրոց հասցրեց,—  
Պատանին կարմիր խնձորը հանեց:  
Ծովի թագուհին վազեց ամրոցից,  
Փարեց պատանուն, կախ ընկաւ վզից,  
Խլեց վարդ-կարմիր խնձորը ձեռքից  
Եւ ագահաբար կըծեց նրանից:  
Կարմիր խնձորը կերած-չկերած,  
Նրա քունքերից ծլեցին յանկարծ  
Պախրի եղջիւրներ, այնքան խիտ ու հոծ,  
Որ նա չէր կարող էլ մտնել ամրոց:  
Զգաց սխալը հպարտ թագուհին,  
Փարեց պատանու ծունկ ու ոտներին  
Արցունքն աշքերին՝ սկսեց աղերսել—  
Այդ պատուհասից իրան ազատել...  
Պատանին հանեց խնձորը գունատ.  
Աղջիկն իմացաւ—փրկութիւնն է այդ:  
Խլած իրերը դարձրեց պատանուն,  
Պատանին նրան տւեց փրկութիւն:  
Աղջիկը փրկւեց իր եղջիւրներից,  
Իսկ «կախարդ» տղան չքացաւ նորից...

## XIII

Նա ներս էր մտել ամրոցը կրկին,  
Փռել էր այնտեղ իր փոքրիկ խալին:  
Եւ երբ աղջիկը նստեց նրա վրան,  
Պատանին շարժեց դիւթող գաւագան:

Եղթօր մօտ թռչել նա ղղեց մտքին:— օն այս խո  
Փակեց աչքերը, բաց արեց կրկին:—  
— Տեսաւ իր առջև մի հզօր բաղաք.  
Չորս կողմը բուրգեր, պարիսպ, աշտարակ,  
Աղջկան դարձրեց մի մատաղ ջորի,  
Ինքն հագաւ կապոյտ բլուզ բանւորի,  
Կախարդ-գլխարկը պահեց կռան տակ,  
Երկաթ-դռներից ներս մտաւ բաղաք:  
Դեռ նոր ներս մտած երկաթ-դռներից,  
Նա շւարեցաւ տեսած պատկերից:—  
— Ողջ քաղաքացիք, թէ ծեր, թէ մանուկ,  
Բարձրացը էլ էին ահազին աղմուկ:  
Խոնւած իրար մեծ-հրապարակում  
Գոռում գոչումով մի շէնք են շինում:  
Մի շէնք փառաւոր, հսկայ, գեղեցիկ,  
Որպէս մի պալատ, ամրոց-արքունիք:  
Պատանին խառնւեց բանող ամբոխին,  
Քշեց քիչ առաջ իր մատաղ «ջորին»:  
Ճարտարապետը նրան որ տեսաւ,  
Իրա մօտ կանչեց և գործի դրաւ:—  
Պատանին խառնւեց ջորէպաններին  
Սկսեց օգնել քար կրողներին:  
Մի ամսւայ մէջ շէնքը վերջացաւ,  
Բայց մեր խեղճ «ջորու» հոգին դուրս եկաւ:  
Քնքուշ և նաղուկ կեանքին սովորած,  
Սև աշխատանքը տանել չկարաց:  
Եւ ճարը կտրած՝ վճռեց գնալ  
Թագաւորի մօտ տղից բողոք տալ:

## XIV

Քաղաքի մէջը մի սիւն կար ցցած,

Իսկ նրա մօտը պահապան կարգած:  
Ով գանգատ ունէր մեծ թագաւորին,  
Գնում էր կանգնում մօտը այդ սիւնին:  
Պահապանները գանգատաւորին  
Աւզարկում էին իսկոյն արքային:

Մի օր էլ «Ճորին» իր կապը կտրեց,  
Պատանու ձեռքից փախաւ, խոյս տւեց,  
Եկաւ ուղղակի սեան տակը կանգնեց  
Եւ անխօս լեզով իր գանգատն արեց:  
Պահապանները «Ճորուն» բռնեցին  
Եւ թագաւորի մօտն ուղարկեցին:  
Թագաւորն իսկոյն մունետիկ դրկեց,  
«Ճորու» տիրոջը փնտրել տւեց:

Եկաւ արքունիք օտար պատանին  
Եւ խոնարհ գլուխ տւեց արքային:  
Նայեց Մեծ արքան, մնաց քարացած.—  
Իր առաջ կրօած եղբայրն էր կանգնած.—  
Բանւորի կապոյտ բլուզը հագին,  
Ոսկի մազերը փուած ուսերին:  
—Բայց չճանաչեց պատանին նրան.—  
Ծիրանի ունէր նա արքայական:

Թագաւորին առժամ զարմացքը պահեց,  
Քնքուշ հայեացքով եղբօրը դիմեց:  
Հարցրեց, թէ նա որտեղից եկաւ,  
Այս սիրուն «Ճորին» որտեղից գտաւ,  
Եւ կամ ի՞նչու է նրան շատ տանջում,  
Որ անասունը գանգատ է անում:

Անմեղ պատանին բացեց իր բերան  
Եւ թագաւորին տւեց պատասխան,—  
—«Եթէ թոյլ կտայ Զեր Մեծութիւնը,

«Կասեմ, «Ճորի» չէ այդ անասունը, այս զամ  
«Այլ չքնաղ դուստրը ծով-թագաւորին և մուտքած է շատ ու շատ տարին»—  
«Երկու Աղաւնի-Աղջիկներ սիրուն  
«Տւին ինձ խրատ և ազատութիւն,  
«Վերջին փորձանքից ես ազատեցի,  
«Եւ իմ մեծ եղբօր քաղաք դիմեցի,  
«Այստեղ ես մենակ և օտարական,  
«Զեմ գիտում ի՞նչպէս պիտ գտնեմ նրան:

— Դու քո եղբօրը շոտով կը գտնես,  
Միայն այս «Ճորուն» պիտի ազատես,  
Վայել չէ երբէք մարդ-ասուններին  
Զարչարել անբան-անասուններին

— «Կարծեմ ասացի, որ «Ճորի» չէ դա,  
«Ահա լաւ տեսէք պատկերը դրա»:  
Ասաց պատանին, շարժեց գաւազան.—

Նախկին պատկերը տւեց աղջկան:

Մեծ-արքան մնաց ափը ի բերան,

Պալատականներն էլ խիստ զարմացան,  
Երբ տեսան նախկին Ճորու փոխանակ,  
Կանգնել է անմեղ մի չքնաղ էակ.—

Այնքան հմայիչ և այնքան սիրուն,

Որ ապուշ կտրած չէին կշտանում

Վրան նայելուց-եօթն օր, եօթ գիշեր

Մարդ չուտէր, չխմէր, հէնց նրան նայէր»:

XV

Մեծ եղբայրն իրան չկարաց պահել,  
Գրկեց եղբօրը, սկսեց համբուրել  
Եւ գորովալից, խեղդւած ձայնով,

Ասաց սրտաբաց խանդաղատանքով.—  
—«Իմ անզին եղբայր, դու բարով եկար, ԱՄ»  
«Իմ երկրի ճանփէն դու բարով գտար, ԱՅ ԱՅ»  
«Ես քեզ թողեցի յուսով բոքոնի»  
«Բաղտը ինձ բերեց թագ ու ծիրանի»  
«Այժմ քո դարձը թող օրհնեալ լինի,  
«Իմ երկիրը քեզ ընծայ արժանի»:

Թագաւորը իր խօսքը վերջացրեց,  
Նոր խնջոյքների ասպարէզ բացւեց:  
«Եօթն օր եօթ գիշեր» կերան խմեցին,  
Արքայավայել խաղեր կազմեցին:  
Երբ որ ընդհանուր քէֆերից պրծան,  
Կարօտ եղբայրներ նոր առանձնացան  
Նստեցին նորից «Եօթն օր եօթ գիշեր»—  
Պատմեցին իրանց գլխի արկածներ:  
Ուղիղ եօթ տարի անցել էր արդէն,  
Ինչ նրանք թողին իրանց տան ճանփէն:  
Ոչ ոք ոչ ոքից ոչ մի լուր չունէր.—  
Ի՞նչ եղան արդեօք նրանց ծնողներ,  
Ուր մնաց նրանց հայրը «բազրկեան»  
Ի՞նչ եղաւ մայրը, դաւաճան հրէան...

## XVI

Փայտարը չհասաւ «Թարւիզ ու Թէհրան»  
Անփորձ գործի մէջ չունեցաւ ոլաշտպան:  
Կորցրեց ձեռքից ողջ հարստութիւն,  
Աղբատ, փոր-փոշման յետ դարձաւ իր տուն:  
Տանը իր գլխին գտաւ նոր փորձանք,  
Զկային ոչ կին և ոչ երեխայր:  
Նա գնաց, գտաւ ընկեր հրէային,

Տեսաւ իր կինը հրէայի մօտին:  
Բայց կինը նրան չկարաց ճանաչել,  
Յոզնած փայտարն էլ չուզեց խօսել  
Ծռեց գլուխը, մնաց նրանց մօտ  
Որպէս տան ծառայ, փոր-հացի կարօտ:  
Փոքր եղբայրը նստեց իր «խալուն»,  
Թուաւ ու հասաւ հայրենական տուն,  
Առաւ հրէային, ծերունի հօրը,  
Առաւ «խալու» վրայ դաւաճան մօրը,  
Բերեց հասցըեց մեծ եղբօր բաղաք,  
Պատմեց ամեն բան, ամեն հանգամանք,  
Թագաւորն իսկոյն դատաստան արեց.—  
Մօրն ու հրէային նա մահ վճռեց,  
Հին հէքիաթները այսպէս են պատմում.—  
Երբ մէկին մահւան են դատապարտում,  
Կապում էին նրան չար ձիու պոչից,  
Կատաղած ձիուն թողնում ախոռից,  
Եւ ձին խրտնած՝ առնում էր, թոչում,  
Դատապարտեալին սար ու ձոր խփում,  
Ամբողջ մարմինը ջարդում, յօշոտում,  
Եւ «մեծ կտորը՝ ականջը թողնում»...

## XVII

Մեծ եղբայրը վազուց նշան էր դրել,  
Բայց հարսանիքը դեռ չէր կատարել:  
Իր հարսանացւին նա խօսք էր տւել  
Կորած եղբօրը եօթ տարի սպասել:  
Եօթ տարին ահա եկաւ լրացաւ,  
Նա հարսանիքի «թագարէք» տեսաւ:  
Հրաման տւեց շինել նոր-պալատ,  
Գեղարւեստական ոճերով առատ...

Իսկ երբ գտնւեց եղբայրը փոքրիկ,  
Նա շուտ ուղարկեց պատգամ-մունետիկ  
Իր նոր խնամի աներ-արքային—  
Չուքել, դարդարել իր հարսնացւին:  
Փոքր եղբայրն էլ անզործ չմնաց:  
Երջանիկ ժամը տեսաւ նա հասած.  
Միրոյ ուխտ խօսեց հին ընկերուհուն,  
Խոստացաւ թողնել անցած «գժութիւն»  
Եւ երկու եղբայր զոյգեր կազմեցին  
Եւ ծերունի հօր առջև չոքեցին. —  
Ծերունին յառեց աչքերը վերև,  
Մաղթեց երկար կեանք եւ երկար արեւ...

Սկսւեց նոր քէֆ, նոր ուրախութիւն,  
Մի չտեսնւած հրաշք կեր ու խում:  
Փոքր եղբայրը զօր տւեց խելքին,  
Զօր տւեց կախարդ իր գաւազանին.  
Եւ գաւազանը արեց ամեն բան.—  
Բաց արեց սեղան ճոխ-կախարդական,  
Լիփ-լիք համաղամ կերակուրներով,  
Յայն-կոյս ծովային թունդ գինիներով...  
Գիւղեր բաղաքներ բազմած սեղանին՝  
«Եօթն օր, եօթ գիշեր» կերան խմեցին. —  
Սեղանը դարձեալ մնաց լիփ-լեցուն—  
Ապշած ամբոխի դարմացըն էր անհուն:  
Յետոյ ցոյց տւին չտես ամբոխին  
Պատկերներ քանի մի կախարդային.

1

Լուսնակ գիշերին ահա մի ծովակ. —  
Փրփուր ջրերով ալիք ու յորձանք:  
Երծաթ ալիքներ գնում են, գալիս,

Թաւիշ ավերին համբոյը են տալիս:  
Յորձանքների մէջ ահա մի նաւակ,  
Նաւակի մէջը շքեղ պատգարակ.—  
Ողջ կամացները երկնի աստղերից,  
Վարագոյները լուսնի շողերից...  
Անդեկ և առանց առագաստների  
Լողում է նաւը ծով-կախարդների,  
Իսկ նաւի առջև վեց զոյգ կարապներ,  
Մաքուր սպիտակ ձիւնի քուլաներ,  
Սիգաճեմ նազով առաջ են լողում,  
Կասես թէ նաւը նրանք են տանում:  
Պատգարակի մէջ ծովի թագուհին՝  
Կոթնած արծաթ թաւիշ բարձերին՝  
Իր երեկոյեան ճեմանքն է անում,  
Եւ ծովի յստակ հայելուն նայում:  
Նայում է նայում և չի կշանում.  
Այդքան նազելի և այդքան սիրուն,  
Նա իրան լինել երեք չէր կարծում...  
—Ապշած ամբոխը նայում էր, նայում,  
Կարծես աչքերին նա չէր հաւատում:

2

Փոխւեց պատկերը ծով-կախարդական:  
Ահա մի պարտէզ շքեղ աննման,  
Ծառերի միջին մարմար աւազան:  
Մարգարիտ ջուրը ցուրտ շատրւանից  
Յայտում, իջնում էր մարմար ավերից:  
Երկ երկնքից երկու աղաւնի  
Յած իջան ափին ցուրտ աւազանի,  
Հանեցին իրանց փետուր ու թւեր  
Դարձան գեղանի երկու աղջիկներ,

Թեթև ծիւնափայլ շղարշներ հագան,  
Եկան հարսանեաց պալատը մտան...  
Փոքը եղբայրը, փեսայ պատանին,  
Հէնց որ նկատեց աղջիկ-հիւրերին,  
Անհուն ժպիտով նրանց ողջունեց,  
Տարաւ եղբօր մօտ՝ ներկայացրեց.—  
—«Այս երկու քոյրեր անմեղ ու սիրուն  
«Տւին ինձ խրատ և ազատութիւն,  
«Վերջին փորձանքից ես ազատւեցի  
«Եւ քո քաղաքը իսկոյն դիմեցի:»  
—«Մենք շատ ուրախ ենք, որ մեզ լսեցիր,  
«Գժութիւներից գու ձեռք քաշեցիր,  
«Ահա եկել ենք Զեր հարսանիքին,  
«Բերել ենք նաև մեզ հետ Զեր բաղտին:  
Սէր եւ բաղտը լինի Զեր բաժին,  
«Գնացէք, հասէք, Զեր մուրազներին...»

### Վերջաբան

Խելօք մանուկներ, երանի ձեզ էլ  
Յաջողւէր այսպէս երջանիկ լինել,  
Որ երբ պատանի՝ դուք մտնէք կեանքը,  
Կեանքը ձեզ տանի դէպի մեծ փառքը,  
Իսկ դրա համար դուք պիտի մնաք  
Անբիծ, անարատ, մաքուր, անխարդախ,  
Լոկ ունայնութեան եւ փուչ վայելին  
Զպիտի զօհէք ձեր կեանին ու հոգին,  
Վեհ իդէալների մաքուր աշխարհում,  
Անարդարութեան մեծ կուի դաւում,  
Դուք չկորցնէք Զեր սէր, Զեր հաւաս,  
Երբէք չինիք մի օր յուսահաս,  
Կոիւ ու մրցում, մրցում ու կոիւ  
Լինի Զեր կեանի նայատակն ազնիւ...

Հրատարակութիմներ

Երեսնի օգոստակար գիտելիքներ տարածող ընկ.

№ 1

Եղեգնուհի — հեքիաթ — Ա. Տ.-Խաչատրեանի. — գինը 10 կ.

№ 2.

Հուրի-Մալաք — հեքիաթ — Նոյն հեղինակի. — գինը 10 կ.

№ 3.

Երկու եղբայր — հեքիաթ Նոյն հեղինակի — գինը 10

ԳԻՆՆ Է 10 ԿՈՎ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0372218

58321

